

ՎԱՐՉԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

Հայաստանի Հանրապետություն, Կոտայքի մարզ  
ք.Աբովյան, երկու հազար տասնհինգ թվականի նոյեմբերի տասներկուսին

12.11.2015թ.

Մենք մի կողմից ՀՀ քաղ. սեփականատեր

Գոռ Անդրանիկի Միրզոյան, ծնված՝ 20 մարտի 1991թ.

հաշվառված՝ ՀՀ Երևան քաղաքի Աբովյան փողոցի 13/տասներեք/ շենքի թիվ 36/երեսունվեց/ բնակարանում,  
այսուհետ «Վարձատու»,

և մյուս կողմից Հայաստանի Հանրապետության Առողջապահության Նախարարությունը՝ ի դեմս ՀՀ Առողջապահության Նախարարության աշխատակազմի ղեկավար՝ Արմեն Կարապետյանի, /որը գործում է կանոնադրության հիման վրա, իրավաբանական հասցեն՝ ՀՀ Երևան 0010, Կառավարական տուն N3 / , այսուհետ՝ «Վարձակալ» , որի անունից լիազորագրով հանդես է գալիս լիազորված անձ՝ ՀՀ քաղ. Արտեն Հենրիկի Պետրոսյանը, ծնված՝ 14 հուլիսի 1967թ. , /լիազորագիր տրված՝ 10.11.2015թ. թիվ ԱԿ/07/12883-15, լիազորագիրը տես գործում/ , հաշվառված՝ ՀՀ Երևան քաղաքի Դավթաշեն 3-րդ /երրորդ/ թաղամասի 18/2/տասնութ կոտորակ երկու/ տանը, սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Սույն պայմանագրով՝ Վարձատուն պարտավորվում է վարձավճարի դիմաց Վարձակալի ժամանակավոր տիրապետմանը և օգտագործմանը տրամադրել ՀՀ Մարզ Կոտայք, համայնք Աբովյան ք. Երևանյան փողոց թիվ 9/ինը/ հասցեում գտնվող բանկի շենքի տարածքից՝ ըստ սեփականության վկայականի շենքի հատակագծի՝ 3-րդ /երրորդ/ հարկն ամբողջությամբ, ընդհանուր՝ 175/մեկ հարյուր յոթանասունհինգ/ քմ. մակերես, որի նկարագիրը տրված է սեփականության վկայականի շենքի հատակագծում, վարձով տրվող տարածք նշումով, գծապատված կարմիրով / հատակագիծը կցվում է պայմանագրին և համարվում սույն պայմանագրի անբաժանելի մասը , /այսուհետ գույք/, օրենքով չարգելված ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու նպատակով:

Անշարժ գույքի նկարագիրը.

Շինության ծածկագիրը՝ 07-002-0074-0010-001-000  
նպատակային նշանակությունը՝ հասարակական  
իրավունքի տեսակը՝ սեփականություն  
մակերեսը/քառ. մ./՝ 633/վեց հարյուր երեսուներեք /

1.2. Վարձակալության հանձնվող Գույքի նկարագիրը արտացոլված է ՀՀ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Աբովյանի տարածքային ստորաբաժանման կողմից 17 հունիսի 2009թ. տրված թիվ 2404023 սեփականության իրավունքի գրանցման վկայականում:

1.3. Վարձակալության հանձնված Գույքի նկատմամբ սեփականության իրավունքի փոխանցումն այլ անձի հիմք չէ սույն պայմանագիրը լուծելու կամ փոփոխելու համար:

1.4. Համաձայն ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի Մարզերի միավորված ստորաբաժանման կողմից 11 նոյեմբերի 2015թ.-ին ժամը՝ 13:59-ի դրությամբ տրված թիվ ՍՏ-11112015-07-0174 անշարժ գույքի միավորի և դրա նկատմամբ գրանցված իրավունքների և սահմանափակումների վերաբերյալ միասնական տեղեկանքի գույքի նկատմամբ գրանցված սահմանափակումներ չկան, ինչը հավաստում է նաև վարձատուն:

Համաձայն միասնական տեղեկանքի՝ 1. Գրանցված իրավունքներ բաժնի կետերի.  
2-րդ՝ «ՖԻՆԸԱ» ունիվերսալ վարկային կազմակերպություն ՓԲԸ, 163.8 քմ. մակերեսով տարածքի նկատմամբ գրանցված /վարձակալության իրավունք:

3-րդ՝ Կորյուն Հարությունյան Ա/Չ, 77 քմ. մակերեսով տարածքի նկատմամբ գրանցված է վարձակալության իրավունք:  
4-րդ՝ Գավիթ և Էլինա ՄՊԸ՝ 20 քմ. մակերեսով տարածքի նկատմամբ գրանցված է վարձակալության իրավունք:

Համաձայն միասնական տեղեկանքի լրացուցիչ նշումներ և տեղեկություններ բաժնի՝ Կադաստրային ծածկագիրը համապատասխանեցված է գործող կարգին:

1.5. Վարձակալության ժամկետը սահմանվում է 5/հինգ/ տարի ժամկետով՝ մինչև 2019 թվականի դեկտեմբերի 01-ը: Վարձակալության իրավունքը վարձակալի մոտ ծագում է ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի համապատասխան տարածքային ստորաբաժանումում վարձակալության իրավունքի պետական գրանցման պահից:

ՀՀ Քաղ. օր.-ի 441 հոդվածի համաձայն՝ կողմերի փոխադարձ համաձայնությամբ, պայմանագրի պայմանները կիրառվում են սկսած 01.12.2015թ.-ից:

2. Կողմերի իրավունքներն ու պարտականությունները

- 2.1. Վարձատուն իրավունք ունի՝
  - 2.1.1. Վարձակալից պահանջել Գույքն օգտագործելու սույն պայմանագրի պայմաններին և դրա նշանակությանը համապատասխան:
  - 2.1.2. Վարձակալի կողմից վարձը վճարելու ժամկետների էական խախտման դեպքում նրանից պահանջել վաղաժամկետ մոծելու վարձավճարը.
  - 2.1.3. Եթե վարձակալը Գույքից օգտվում է պայմանագրի պայմաններին կամ դրա նշանակությանն անհամապատասխան, պահանջել լուծելու պայմանագիրը և հատուցելու վնասները:

- 2.2. Վարձատուն պարտավոր է՝
  - 2.2.1. Գույքը վարձակալին հանձնել հանձման-ընդունման ակտով՝ սույն պայմանագիրն ուժի մեջ մտնելու պահից 10/տաս/ օրյա ժամկետում: Հանձման-ընդունման ակտը ստորագրում են Վարձատուն և Վարձակալը:
  - 2.2.2. Գույքը վարձակալին տրամադրել սույն պայմանագրի պայմաններին և դրա նշանակությանը համապատասխանող վիճակում, հանձնել դրա բոլոր պատկանելիքներով ու դրան վերաբերող փաստաթղթերով /տեխնիկական անձնագիր, որակի հավաստագիր և այլն/.

2.2.3. Վարձակալին նախագրուչացնել Գույքի նկատմամբ երրորդ անձանց բոլոր իրավունքների (գրավի իրավունք, սերվիտուտ և այլն) մասին:

2.2.4. Վարձակալի պահանջի դեպքում անհատույց վերացնել Գույքի թերությունները կամ իջեցնել վարձավճարը:

2.2.5. Մեկամսյա ժամկետում քննարկել Գույքի նշանակության փոփոխման, ինչպես նաև դրա վերանորոգման հետ կապված Վարձակալի դիմումները:

### 2.3. Վարձակալն իրավունք ունի՝

2.3.1. Պահանջել Վարձատուից՝ սույն պայմանագրի 2.2.1. կետում սահմանված ժամկետում իրեն տրամադրել Գույքը:

2.3.2. Վարձատուից պահանջել՝ իրեն տրամադրելու Գույքին վերաբերող փաստաթղթերը:

2.3.3. Գույքի օգտագործմանն ամբողջովին կամ մասնակիորեն խաչընդոտող թերություններ հայտնաբերելիս, իր ընտրությամբ՝

2.3.3.1. Վարձատուից պահանջել անհատույց վերացնելու Գույքի թերությունները կամ համաչափ իջեցնելու վարձավճարը կամ հատուցելու Գույքի թերությունները վերացնելու համար իր կատարած ծախսերը:

2.3.3.2. Վարձատուին նախապես տեղեկացնելով՝ վարձավճարից պահել տվյալ թերությունները վերացնելու համար իր կատարած ծախսերի գումարը, պահանջել վաղաժամկետ լուծելու պայմանագիրը:

2.3.3.4. Պահանջել նվազեցնելու վարձավճարի չափը, եթե հանգամանքների ուժով, որոնց համար ինքնապատասխանատվություն չի կրում, Գույքի վիճակը վատթարացել է:

2.3.4. Վարձատուի կողմից հիմնական վերանորոգում կատարելու սույն պայմանագրի 2.2.4. կետում նշված պարտականությունը չկատարելու դեպքում՝

2.3.4.1. Կատարել սույն պայմանագրով նախատեսված կամ անհետաձգելի անհրաժեշտությամբ ծագած հիմնական վերանորոգումը և Վարձատուից պահանջել վերանորոգման արժեքը կամ դա հաշվարկել վարձավճարի հաշվին:

2.3.4.2. Պահանջել համապատասխան չափով նվազեցնելու վարձավճարի հաշվին:

2.3.4.3. Պահանջել լուծելու պայմանագիրը և հատուցելու վնասները:

2.3.4.4. Վարձատուի կողմից սույն պայմանագրի 2.2.4. կետում նշված պարտականությունը չկատարելու դեպքում, պահանջել նվազեցնելու վարձավճարը:

### 2.4. Վարձակալը պարտավոր է՝

2.4.1. Գույքն օգտագործել պայմանագրի պայմաններին և Գույքի նշանակությանը համապատասխան:

2.4.2. Ժամանակին մուծել Գույքն օգտագործելու համար սույն պայմանագրի 3-րդ կետում նախատեսված վճարը (վարձավճարը):

2.4.3. Իր հաշվին կատարել Գույքի ընթացիկ բոլոր տեսակի վերանորոգումները, չպակասեցնելով վարձավճարը:

2.4.4. Ժամանակին կատարել վերանորոգումը:

2.4.5. Առանց Վարձատուի գրավոր համաձայնության՝ Օբյեկտում չկատարել փակ և բաց լարանցումներ և չանցկացնել հաղորդակցության ուղիներ, չանել վերանախագծումներ և վերասարքավորումներ:

2.4.6. Վարձակալած Գույքի տարածքներում պահպանել սանիտարահամաճարակային կայանների, պետիչեջ վերահսկողության մարմինների պահանջները, ինչպես նաև բոլոր այն կանոնները և նորմերը, որոնք գործում են Վարձակալի գործունեության ձևերի ու վարձակալած Գույքի նկատմամբ:

2.4.7. Վարձատուի որոշած ժամկետներում ազատել տարածքները՝ կապված Գույքի կառուցվածքների վթարային վիճակի, Գույքը հիմնական վերանորոգման ենթարկելու կամ քաղաքաշինության նկատառումներով այն քանդելու հետ:

2.4.8. Գույքը և դրան հարող տարածքը պահպանել պատշաճ սանիտարական վիճակում, ինչպես նաև մշտապես պատշաճ վիճակում պահպանել Գույքի ճակատային մասերը:

2.4.9. Վարձատուին ամփոփապես տեղեկացնել Գույքի ամեն մի վնասվածքի, վթարի կամ այլ իրադարձության մասին, որը վնաս է հասցրել/կամ սպառնում է հասցնել/ Գույքին, և ժամանակին ձեռնարկել բոլոր հնարավոր միջոցները վտանգի կանխարգելման համար:

2.4.10. Սույն պայմանագրի ուժի մեջ մտնելու օրվանից 10/տասը/ օրվա ընթացքում այլ կազմակերպությունների հետ կնքել պայմանագրեր՝ վարձակալած Գույքը սպասարկելու և էներգետիկ կամ այլ միջոցներով ապահովելու վերաբերյալ:

2.4.11. Վարձատուի գրավոր համաձայնությամբ կնքել գրավի, ենթավարձակալության պայմանագրեր և մտնել գործարքների մեջ /իրավաբանական անձի կանոնադրական կապախտայի մեջ Օբյեկտի կամ դրա մի մասի վարձակալության իրավունքի ներդրում/։ Առանց նշված համաձայնության՝ Վարձակալի կողմից մնացած պայմանագրեր կնքելու կամ մնաց գործարքներ կատարելը հիմք է պայմանագրի միակողմանիորեն լուծման համար:

2.4.12. Ապահովել Վարձատուի և նրա ներկայացուցիչների անարգել մոտքն Գույք՝ դրա զննման և ստուգման համար:

2.4.13. Ապահովագրական պայմանագրով նախատեսված ապահովագրական դեպքը վրա հասնելու դեպքում անհապաղ հաղորդել համապատասխան իրավասու մարմիններին (ոստիկանություն, հրշեջ ծառայություն, հաղորդակցության ուղիների անվտանգությունն ապահովող ծառայություն և այլն) և ապահովագրական կազմակերպությանը՝ վերջինիս ներկայացուցիչներին հնարավորություն ընձեռնելով զննել տարածքը:

2.4.14. Գույքն ազատելիս այն սաքքին վիճակում հանձնել ակտով՝ հաշվի առնելով բնականոն մաշվածությունը:

2.4.15. Ոչ ուշ, քան 3/երեք/ ամիս առաջ, Վարձատուին գրավոր տեղեկացնել վարձակալված Գույքի սպասվելիք ազատման մասին՝ կապված ինչպես պայմանագրի ժամկետն ավարտվելու, այնպես էլ դրա վաղաժամկետ դադարեցնելու հետ:

2.4.16. Սահմանված ժամկետում կատարել Վարձատուի կարգադրությունները՝ ուղղված իր գործունեության ընթացքում առաջացած այնպիսի իրավիճակների վերացմանը, որոնք վտանգի տակ են դնում Գույքը, իսկ վարձակալված Գույքից դուրս՝ բնապահպանական և սանիտարական իրավիճակը:

2.4.17. Սույն պայմանագիրը կնքման և նոտարական վավերացման օրվանից՝ 30/երեսուն/ աշխատանքային օրվա ընթացքում «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի 24 հոդվածի համաձայն սույն պայմանագիրը ենթակա է գրանցման ՀՀ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի տարածքային ստորաբաժանումում՝ վարձակալության իրավունքի գրանցման համար:

### 3. Պայմանագրով կատարվող վճարները և հաշվարկները

3.1 Պայմանագրի կնքման պահին յուրաքանչյուր ամսվա համար վարձավճար է սահմանվում ` 110 000 /մեկ հարյուր տաս հազար/ ՀՀ դրամ գումար/ներառյալ հարկատեսակները, եթե կիրառելի են/ , որը վճարվելու է փոխանցումով՝ Վարձատու՝ Գոռ Անդրանիկի Միրզոյանի անվամբ “ՀԱՅԲԻԶՆԵՄԲԱՆԿ” ՓԲԸ-ի «Արովան» մասնաճյուղում բացված թիվ 1150010946930100 հաշվեհամարին՝ մինչև յուրաքանչյուր ամսվա 15-ը :

3.2. Գրամի արժեզրկման դեպքում Վարձատուն իրավունք ունի միակողմանիորեն փոխել վարձավճարի չափը՝ այդ մասին գրավոր տեղեկացնելով Վարձակալին:

3.3. Նշված ծանուցումը պետք է կատարվի այնպես, որ Վարձակալը դրան ծանոթանա կամ հնարավորություն ունենա ծանոթանալու ոչ ուշ, քան համապատասխան վճարումը կատարելուց մեկ ամիս առաջ:

#### 4. Կողմերի Պատասխանատվությունը

4.1 Վարձակալը պայմանագրի 3.1 կետում նախատեսված վարձավճարի կետանցի դեպքում յուրաքանչյուր օրվա համար Վարձատուին վճարում է տույժ վարձավճարի 0,05 տոկոսի չափով:

4.2. Պայմանագրի այլ պայմաններն խախտելու դեպքում մեղավոր կողմը վճարում է տույժ՝ եռամսյակային վարձավճարի գումարի 0,05 տոկոսի չափով:

4.3. Տուգանքի /տույժի/ մոծումը կողմերին չի ազատում պայմանագրով նրանց վրա դրված պարտավորությունները կատարելուց:

4.4. Եթե Վարձակալը պայմանագիրը դադարելուց հետո չի վերադարձրել Գույքը կամ այն վերադարձրել է ժամկետի խախտմամբ, ապա Վարձատուն իրավունք ունի վարձավճար պահանջել կետանցի ամբողջ ժամանակահատվածի համար, եթե նման վճարը լիովին չի մարում Վարձատուին պատճառած վնասները, նա կարող է պահանջել հատուցելու մնացած մասի համար:

4.5. Վարձատուն պատասխանատվություն չի կրում Գույքի այն թերությունների համար, որոնք նա նշել է սույն պայմանագիրը կնքելիս կամ նախապես հայտնի են եղել Վարձակալին կամ պետք է Վարձակալը հայտնաբերեր Գույքը գնելիս:

#### 5. Վարձակալած օբյեկտի բարելավումներ

5.1 Վարձակալած Գույքից Վարձակալի կատարած բաժանելի բարելավումները համարվում են նրա սեփականությունը:

5.2. Եթե Վարձակալն իր միջոցների հաշվին և Վարձատուի համաձայնությամբ կատարել է վարձակալած Գույքից անբաժանելի բարելավումներ՝ առանց դրան վնաս պատճառելու, ապա սույն պայմանագիրը դադարելուց հետո Վարձակալն իրավունք ունի հատուցում ստանալ այդ բարելավումների արժեքի չափով:

5.3 Վարձակալի կողմից առանց Վարձատուի համաձայնության կատարած վարձակալած Գույքից անբաժանելի բարելավումների արժեքը չի հատուցվում:

5.4. Վարձակալած Գույքի ամրափակված միջոցների հաշվին կատարած, ինչպես բաժանելի, այնպես էլ անբաժանելի բարելավումները համարվում են Վարձատուի սեփականություն:

#### 6. Պայմանագրի վաղաժամկետ լուծման հիմքերը

6.1. Վարձատուի պահանջով վարձակալության պայմանագիրը կարող է դատական կարգով վաղաժամկետ լուծվել, եթե Վարձակալը՝

6.1.1. Գույքն օգտագործել է սույն պայմանագրի պայմանների կամ Գույքի նշանակության էական կամ բազմակի խախտումներով.

6.1.2. Էականորեն վատթարացրել է Գույքի վիճակը.

6.1.3. Սույն պայմանագրով սահմանված վճարման ժամկետը լրանալուց հետո երկու անգամից ավել չի մոծել վարձավճարը.

6.1.4. Սույն պայմանագրով սահմանված ժամկետներում չի կատարել Գույքի ընթացիկ վերանորոգումը:

6.2. Վարձակալի պահանջով սույն պայմանագիրը կարող է դատարանով վաղաժամկետ լուծվել, եթե՝

6.2.1. Վարձատուն Վարձակալի օգտագործմանը չի տրամադրել Գույքը կամ խոչնդոտներ է ստեղծել Գույքը պայմանագրի պայմանների կամ դրա նշանակությանը համապատասխան օգտագործելու համար:

6.2.2. Վարձակալին հանձնված Գույքն ունի դրա օգտագործմանը խոչընդոտող թերություններ, որոնց մասին Վարձատուն չի նշել պայմանագիրը կնքելիս, որոնք նախապես հայտնի չեն եղել Վարձակալին և վերջինս չէր կարող հայտնաբերել պայմանագիրը կնքելիս:

6.2.3. Հանգամանքների բերումով, որոնց համար Վարձակալը պատասխանատու չէ, Գույքը դարձել է օգտագործման համար ոչ պիտանի:

#### 7. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԸԺՈՐ)

7.1. Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է, անհախաբահարելի ուժի ազդեցության արդյունք, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, գործադուլները և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3(երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրը իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

#### 8. Հատուկ պայմաններ

8.1 Պայմանագրի գործողությունը կարող է դադարել կողմերի փոխադարձ համաձայնությամբ ցանկացած այլ ժամկետում:

8.2. Սույն պայմանագրի բոլոր լրացումները և փոփոխությունները կամ պայմանագրի լուծումը օրինական է այն դեպքում եթե դրանք կատարվում են կողմերի գրավոր համաձայնությամբ՝ նոտարական վավերացմամբ կամ դատարանի վճռով և գրանցվում ԱԳՊԿԱՏՍ-ում:

8.3. Գույքի վրա արտաքին գովազդի և տեղեկատվության օբյեկտների տեղադրումն իրականացնում է Վարձակալը կամ նրա հետ համապատասխան պայմանագիր կնքած անձը՝ առանց վարձատուի համաձայնության:

8.4. Կողմերի անվանման, գտնվելու վայրի, բանկային վավերապայմանների փոփոխման կամ վերակազմավորման դեպքում նրանք պարտավոր են երկշաբաթյա ժամկետում միմյանց գրավոր տեղեկացնել տեղի ունեցած փոփոխությունների մասին:

8.5. Մենք «Կողմերս» լիովին հասկանում և ընդունում ենք կնքվող պայմանագրի իմաստն ու նշանակությունը, իսկ դրանից բխող և մեզ առընչվող իրավական, գույքային և այլ հետևանքները մեզ ձեռնառու են: Պայմանագրի բոլոր դրույթները բխում են մեր «Կողմերիս» իրական մտադրություններից և այն ստորագրում ենք մեր կամքի ազատ արտահայտմամբ:

8.6. Սույն պայմանագիրը վավերացված է հայերեն լեզվով, կողմերի ցանկությամբ չորս օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, որից մեկը պահվում է նոտարի գործերում, մյուս օրինակները տրվում են կողմերին:

8.7. «Նոտարիատի մասին» ՀՀ օրենքի 43 հոդվածի համաձայն նոտարի կողմից վավերացված պայմանագրերի օրինակները ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, իսկ դրանց միջև հակասության դեպքում նախապատվությունը տրվում է նոտարի մոտ պահվող բնօրինակին:

9. Պայմանագրի տեքստը նոտարի կողմից բարձրաձայն ընթերցվեց կողմերի համար:

10. Կողմերի հասցեները, վավերապայմանները և ստորագրությունները:

Վ Ա Ր Չ Ա Տ ՈՒ

Գոռ Անդրանիկի Միրզոյան

անձնագիր սերիա AN0748432, տրված՝ 13.12.2013թ., 001

*Գոռ Անդրանիկի Միրզոյան*

հաշվառված՝ ՀՀ Երևան քաղաքի Արովյան փողոցի 13/տասներեք/ շենքի թիվ 36/երեսունվեց/ բնակարանում

Վ Ա Ր Չ Ա Կ Ա Լ

Հայաստանի Հանրապետության Առողջապահության Նախարարություն՝ ՀՀ Առողջապահության Նախարարության աշխատակազմի ղեկավար՝ Արմեն Կարապետյանի լիազորված անձ՝ Արտեմ Հենրիկի Պետրոսյան անձնագիր սերիա AM0787778, տրված՝ 04.07.2012թ., 013

*Արտեմ Հենրիկի Պետրոսյան*

հաշվառված՝ ՀՀ Երևան քաղաքի Դավթաշեն 3-րդ/երրորդ/ քաղամասի 18/2/տասնութ կոտորակ երկու/ տանը



« Տասներկուսը » նոյեմբերի երկու հազար տասնհինգ թվականին սույն վարձակալության պայմանագիրը վավերացված է ՀՀ Կոտայք նոտարական տարածքի նոտար Ռինա Մխիթարյանի կողմից: Կողմերը պայմանագիրը ստորագրեցին իմ ներկայությամբ: Պայմանագիրը ստորագրած անձանց ընթրությունը պարզված է, նրանց գործունակությունը, իրավաբանական անձի իրավունակությունը, նրա ներկայացուցչի լիազորությունները, անշարժ գույքի պատկանելիությունը սեփականատիրոջը՝ ստուգված:

ՀՀ քաղաքացիական օրենքի 655 հոդվածի համաձայն անշարժ գույքի նկատմամբ վարձակալության իրավունքի պետական գրանցումը ենթակա է գրանցման գույքի գտնվելու վայրի ԱԳԿՊԿԱՏ- ստորաբաժանումում, /30 / երեսուն / օրյա ժամկետում /:

Գրանցված է սեղանամատյանում 5943

«Պետական տուրքի մասին» և «Նոտարիատի մասին» ՀՀ օրենքների համաձայն գանձված է պետական տուրք և ծառայության վճար

Ն.ՈՍԱԲ



